ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ-ՏԻՊԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ

ԷԴՈՒԱՐԴ ՄԵԼՔՈՆՅԱՆ

Պատմության մատերիալիստական ըմբռնումը հնարավոր դարձավ տարբեր դարաշրջաններին և հասարակություններին վերաբերող հսկայական պատմական նյութի համեմատական վերլուծության շնորհիվ։ Հենց այս ըմբռնումն էլ պատմական որոշակի համակարգերի համեմատական ուսումնասիրման ամենաարդյունավետ մեթոդաբանական հիմքն է։ Չնայած դրան, մինչև վերջին ժամանակները համեմատական ուսումնասիրությունների պրոբլեմներով զբաղվում էին գերազանցապես լեզվաբանները և գրականագետները։ Միայն վերջին տասնամյակում է, որ փորձեր են արվում համեմատական մեթոդը կիրառել հասարակական-պատմական համակարգերի նկատմամբ, ինչպես նաև պատմական գիտելիքի մեթոդաբանական պրոբլեմների լուծման համար։

Պատմահամեմատական մեթոդի տրամաբանական-մեթոդաբանական հիմքերի մշակման ելակետային հարցն այն սկզբունքների ընտրությունն է, որոնց համաձայն կատարվում է հետազոտության օբյեկտների ընտրությունը և բացահայտվում նրանց համեմատման հիմնական եզրերը։ Պատմական համակարգերի համեմատական ուսումնասիրությունները գիտական բնույթ չեն կարող կրել, քանի դեռ նշված հարցերը լուծված չեն։ Այն հարցը, թե հատկապես ո՞ր պատմական երևույթները, ի՞նչ նպատակով և ինչպե՞ս պետք է համեմատել, ինչպես համեմատական մեթոդի բնույթի, այնպես էլ պատմական իմացության բնագավառում նրա կիրառման հնարավորությունների բացահայտման համար սկզբունքային մեթոդաբանական նշանակություն ունի։

Այս հարցերի կապակցությամբ սովետական մասնագիտական գրականության մեջ գոյություն ունեցող կարծիքները հիմնականում կարելի է բաժանել երկու խմբի։ Առաջին մոտեցման դեպքում լեզվաբանության մեջ գոյություն ունեցող պատմահամեմատական մեթոդը ամբողջությամբ տեղափոխվում է պատմական գիտելիքի բնագավառը, որի շնորհիվ հնարավոր է վերջինիս օբյեկտները համեմատել «դիախրոնիայի» և «սինխրոնիայի» սկզբունքով, այսինքն՝ ըստ նրանց ժամանակային փոխհաջորդականության և միաժամանակայնության[1]։ Այս դեպքում բաց է մնում այն հարցը, թե նշված չափանիշները որքանով են կիրառելի հասարակական-պատմական համակարգերի նկատմամբ։ Մինչդեռ պատմական գիտելիքի յուրահատկություններից մեկը պատմական պրոցեսի ոչ-սինխրոն և անհամաչափ ընթացքի հաշվառումն է։ Համաշխարհային պատմության հորիզոնական կտրվածքը ասված է

---

[1] Г. А. Подкорытов, Историзм как метод научного познания, Л., 1967, стр. 123; Ю. Кахк, Нужна ли новая историческая наука? («Вопросы истории», 1969, № 3, стр. 15).

լույսի տակ հանդես է գալիս իբրև ամենատարբեր մշակույթների և հասարակությունների բազմազանություն։ Ընդ որում, վերջիններիս տարբերությունները կարող են արտահայտել ինչպես հասարակական-մշակութային զարգացման տարբեր շրջանների, այնպես էլ պատմական համակարգերի տեղային (լոկալ) յուրահատկությունները։ Վերջինս իր հերթին պայմանավորված է մշակույթի գոյության միջավայրով և զարգացման անհատական ճակատագրով։ Համեմատական հետազոտության մեթոդաբանական սկզբունքները մշակելիս պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ համաշխարհային պատմությունը տարածահորիզոնական կտրվածքով ուսումնասիրելիս, հետազոտողը գործ ունի զարգացման որակապես տարբեր մակարդակների վրա գտնվող հասարակությունների համագոյակցության հետ։ Սրանից հետևում է, որ պատմական համակարգերի համեմատական ուսումնասիրության մեջ «հորիզոնական» և «ուղղահայաց» հասկացությունների օգտագործումը պահանջում է ոչ թե ժամանակային ու տարածական, այլ որակապես այլ չափանիշների կիրառում[2]։ Պահանջվող չափանիշները պետք է ի վիճակի լինեն արտահայտելու համեմատվող օբյեկտների միատիպությունը և այլատիպությունը։ Այսպիսի չափանիշների առկայությունը թույլ է տալիս մշակելու համեմատական հետազոտությունների սկզբունքորեն այլ ըմբռնում, որի հիմքը համեմատվող օբյեկտների տիպաբանական բնութագրերի պարտադիր հաշվառումն է։ Այս ըմբռնման էությունն այն է, որ համեմատական հետազոտությունների կատարումը, նրանց արժեքը և դիտական հիմնավորվածությունը ուղղակիորեն կախված են ուսումնասիրվող օբյեկտների նախնական տիպաբանական ընդհանրացումից և ամենատարբեր մակարդակի տիպերի կառուցումից։

Համեմատական հետազոտության սկզբունքների այսպիսի ըմբռնումը սովետական հետազոտողների մեծ մասն ընդունել է[3], թեև այդ ըմբռնման տրամաբանական-մեթոդաբանական հիմքերը բավարար չափով մշակված չեն։ Դրա հետևանքով էլ պատմական համակարգերի նույնատիպության և բազմատիպության, նրանց տարբեր մակարդակների և ենթամակարդակների չափանիշների, հատուկ տիպաբանական հասկացությունների կառուցման ու նրանց փոխհարաբերությունների հետ կապված հարցերը սպասում են իրենց լուծմանը։ Ընդ որում, պետք է հաշվի առնել, որ նշված պրոբլեմների մշակումը պետք է կատարվի ոչ միայն ընդհանուր և վերացական ձևով, այլև

---

[2] Պետք է նշել, սակայն, որ հետազոտության ընթացքում կարող են առաջանալ այնպիսի պրոբլեմներ, որոնք պատմական համակարգերի հատկապես սինխրոն ուսումնասիրության կարիք ունեն։ Այս կապակցությամբ ուշադրության արժանի է Բ. Պորշնևի առաջարկած պատմության հետազոտման հատուկ «սինխրոնիկ» մեթոդը, որը հնարավորություն է տալիս «շատ ժողովուրդների ճակատագիրը դիտել նրանց միաժամանակյա կապի մեջ» (Б. Ф. Поршнев, Франция, английская революция и европенская политика в середине XVII в., М., 1970, стр. 21).

[3] Э. С. Маркарян, Об основных принципах сравнительного изучения истории («Вопросы истории», 1966, № 7); его же, Очерки теории культуры, Ереван, 1969; В. В. Иванов, К вопросу о содержании и развитии сравнительно-исторического метода («Методологические и историографические вопросы исторической науки», вып. 5, Томск, 1967); А. И. Уваров, К вопросу о взаимосвязи принципа объективности и структурного метода в историческом познании («Проблемы методологии и логики науки», вып. 5, Томск, 1969) и др.

պետք է հաշվի առնվի պատմական գիտելիքի տարբեր բնագավառների առջև կանգնած ճանաչողական խնդիրների յուրահատկությունը։

Տիպաբանությունը գիտության զարգացման էմպիրիկ աստիճանից տեսականին անցնելու որոշակի շրջան է։ Անցման այդ պրոցեսը բնութագրվում է գիտության հասկացային համակարգի քննադատական վերլուծությամբ, կատարելագործմամբ և զարգացմամբ, ինչպես նաև նրա մեջ հարաբերականորեն ինքնուրույն տեսական մակարդակի առանձնացմամբ։ Սրա հետ կապված նշենք, որ տիպաբանությունը չպետք է նույնացնել էմպիրիկ դասակարգման հետ, որը իրագործվում է անմիջականորեն դիտելի երևույթների ու հատկանիշների հիման վրա և որը լայնորեն կիրառվում է գիտելիքի մի շարք բնագավառներում։ Չնայած իրենց փաստական հիմքին, տիպերը որոշակի հասկացային կառուցվածքներ են, որոնց կազմավորումը անպայմանորեն պահանջում է տեսական մտածողության մասնակցություն։ Ճիշտ է, տիպերը մոտավորապես համապատասխանում են էմպիրիկ մակարդակում գտնված էություններին, բայց նրանք հազվադեպ են համընկնում փաստերի հետ։

Պատմական տիպաբանության տակ հասկացվում են ամենատարբեր մակարդակների մշակութային պատմական երևույթների ընդհանրացման, կարգավորման և դասակարգման տեսությունն ու պրակտիկան, որոնք իրականացվում են այդ երևույթների ընդհանուր հատկությունների, բնորոշ գծերի, զարգացման ու գոյության ընդհանուր օրենքների հիման վրա[4]։ Այսպիսով կառուցվում են համապատասխան մշակութա-պատմական տիպեր-մոդելներ։ Սակայն սա չի նշանակում, որ տիպ հասկացության տակ ըմբռնվում են բոլոր այն օբյեկտները, որոնք նույն չափով են օժտված բոլոր հատկություններով։ Ավելի շուտ տիպը գործում է որպես յուրատեսակ ցուցանիշ, ըստ որի որոշում են, թե տվյալ էմպիրիկ երևույթը ինչքանով է համապատասխանում նրան։ Ընդ որում, այդ համապատասխանության աստիճանի հետազոտությունը սկզբունքային նշանակություն է ձեռք բերում։

Իդեալական տիպ-մոդելը իդեալականորեն մտածելի համակարգ է, որը հետազոտության օբյեկտը վերարտադրում է պարզեցված կամ իդեալականացված տեսքով և գտնվում է նրա հետ նմանության որոշակի հարաբերության մեջ։ Այս դեպքում տիպերը ոչ թե հետազոտվող օբյեկտի մտային պարզ ներկայացուցիչներ են, այլ նրա պարզեցված, իդեալականացված կրկնօրինակները, որոնք վերարտադրում են նրա հիմնական տարրերը, վերջիններիս հարաբերությունները, գլխավոր և էական կապերը, օբյեկտի փոփոխման և զարգացման օրինաչափ տենդենցները։ Այլ կերպ ասած, տիպ-մոդելը ոչ թե առանձին հարաբերություն կամ կապ արտացոլող հասկացություն է, այլ այն արտացոլում է տարրերի, կապերի և հարաբերությունների համախմբությունը նրանց միասնության մեջ, համակարգում։

---

4 Մասնագիտական գրականության մեջ երբեմն տիպաբանության տակ հասկացվում է «օրինաչափ, մի շարք օբյեկտիվ գործոններով պայմանավորված կրկնվողականություն բնության և հասարակության մեջ» (Б. Н. Путилов, Методология сравнительно-исторического изучения фольклора. Л., 1976, стр. 9).

Այս կարծիքի հետ դժվար է համաձայնվել, որովհետև տիպաբանությունը ոչ թե ինքը կրկնվողականությունն է, այլ հատուկ վերլուծական, տրամաբանական գործունեության արդյունք, որը հնարավորություն է տալիս երևույթների մեջ բացահայտել և գտնել կրկնվողականությունը։

Կարելի է ասել, որ տիպերի կառուցումը պատմական օբյեկտների սիստեմային վերլուծության արդյունք է, որը իր հերթին ենթադրում է այդ օբյեկտների կառուցվածքային բնութագրերի հաշվառումը։

Կառուցվող տիպ-մոդելները պետք է բավարար չափով համապատասխանեն այն բարդ համակարգերին, որոնք մենք ուսումնասիրում ենք։ Սակայն մոդելի համապատասխանությունը նախօրինակին կարող է մեր գիտելիքների հարստացման հիմք լինել միայն այն դեպքում, երբ այն վերաբերվում է մոդելի և նախօրինակի տարրերին ու դրանց փոխհարաբերությանը։ Հենց այդ պատճառով էլ իդեալական տիպ-մոդելի կառուցվածքը որոշարկված է հետազոտության օբյեկտի կառուցվածքային յուրահատկություններով կամ, ավելի ճիշտ, նրա տարրերով և վերջիններիս փոխհարաբերությամբ։ Այս մոտեցման դեպքում հասկանալի է դառնում, որ այս կամ այն պատմական համակարգի նախնական կառուցվածքի բացահայտումը որոշակի պայմաններում կախված է ոչ այնքան համակարգի տարրերի բնույթից, որքան նրանց փոխկապակցման եղանակից. ընդ որում, որքան բարդ է ուսումնասիրվող համակարգը, այնքան մեծ է փոխկապակցման եղանակի նշանակությունը։

Տվյալ դեպքում համակարգի տակ նկատի ունենք «իդեալական համակարգ». իդեալական այն իմաստով, որ բաղադրամասերը, որոնցից այն կառուցված է, մտային էքսպերիմենտի միջոցով առանձնացված են ենթադրաբար ավելի քիչ նշանակալից երևույթներից, որոնց հետ նրանք միացված են իրական աշխարհում։ Պատմական իմացության, ինչպես և ամեն մի իմացության, նպատակը աշխարհը բացատրելն է։ Իրական աշխարհը, ի տարբերություն հասկացային համակարգերում ամրագրված աշխարհի, տարբեր երևույթների էությունների բազմատեսակ և անվերջ փոխկապակցությունների համակարգ է։ Հասկանալի է, որ բոլոր երևույթները և կապերը չէ, որ կարող են արտացոլվել հասկացային համակարգում։ Հենց այդ պատճառով էլ իդեալական համակարգերը պետք է դիտվեն որպես «փակ» համակարգեր, այնինչ երևույթը, որին նրանք վերաբերվում են, միշտ «բաց» համակարգ է։ Դա նշանակում է, որ «իրական» փոխկապակցվածությունները ոչ-սիմետրիկ են և անընդհատ փոփոխվում են, որ սիստեմային վերլուծությունը պետք է պատրաստ լինի իդեալական մոդելներից անցնելու իրական աշխարհի հետազոտմանը։

Իդեալական տիպ-մոդելների օգտագործումը նպատակահարմար է միայն այդ դեպքում, երբ դրանք ավելի պարզ են և հարմար հետազոտության համար, քան դրանցով փոխարինվող օբյեկտը։

Տիպ-մոդելների այս բնույթի շնորհիվ դրանց կիրառումը պատմական հետազոտություններում ավելի մեծ նշանակություն է ձեռք բերում, որովհետև դրանց շնորհիվ հնարավոր է դառնում վերանալ պատմական երևույթների չափազանց բարդ և փոփոխական բնույթից և բազմաթիվ ոչ էական կապերից ու արտաքին ազդեցություններից։ Այս եղանակով կառուցված պատմական մոդելները հնարավոր են դարձնում օբյեկտը ուսումնասիրել «մերկ», «մաքուր» տեսքով, առանց խանգարիչ հանգամանքների, որի շնորհիվ հնարավոր է դառնում տարբեր պատմական պրոցեսների ու երևույթների ներքին բնույթի խորը ըմբռնումը, իդեալականից իրական երևույթի շեղման պատճառների բացահայտումը։

Օբյեկտը մաքուր տեսքով ներկայացնելու տիպ-մոդելների ընդունակությունը պատմության համեմատական ուսումնասիրություններում նրանց կիրառմանը լայն հնարավորություն է ընձեռում, որը մասնավորապես ցույց է տվել Ֆ. Էնգելսը «Ֆեոդալիզմ» ընդհանուր հասկացությունը համեմատելով ֆեոդալիզմի դրսևորման տարբեր ձևերի հետ[5]։ Այդ նույն սկզբունքը կապիտալիզմի մարքսյան հետազոտության հիմնական մեթոդաբանական սկզբունքն է։ Այսպես, կապիտալիստական հասարակության մոդելը կառուցելիս Կ. Մարքսը հողային սեփականության առկայությունը բոլորովին հաշվի չի առնում։ «Միայն այս ճանապարհով կարելի է յուրաքանչյուր հարաբերություն հետազոտելիս,— նշել է Մարքսը,— խուսափել բոլորի մասին միանգամից խոսելու անհրաժեշտությունից»[6]։

Իդեալական մոդելների կառուցումը ոչ թե ինքնանպատակ է, այլ բարդ երևույթների հետազոտման էվրիստիկական միջոց։ Դրանք հասկացությունների միջոցով ռեալության կարգավորման առաջին փորձն են։ Դրանց ճանաչողական նշանակությունն այն է, որ նշում են այն ուղիները, որոնցով ընթանալով՝ հետազոտողը կարող է իրագործել այդ խնդիրը։ Դրանց միջոցով հնարավոր է դառնում դասակարգել հիմնական հասկացությունները, խուսափել կրկնություններից, անհետևողականությունից և կամայականություններից։

Իդեալական տիպ-մոդելների սիստեմատիկ և նպատակասլաց կառուցումը և կիրառումը անհրաժեշտ է դարձնում անհատական, կոնկրետ պատմական երևույթները բացատրող ընդհանուր տեսության հետագա զարգացումը և ճշգրտումը, ինչպես նաև հնարավորություն է ընձեռում մարդկային մշակույթի ընդհանուր պատմության մեջ ցույց տալ առանձին պատմական երևույթների տեղը։

Տիպեր կարելի է կառուցել ամենատարբեր մակարդակներում՝ կախված կոնկրետ ճանաչողական խնդիրներից։ Ջնայած դրան, մեկ հետաքրքրող տեսակետից կարելի է ընդգծել նրանց երկու յուրահատկությունները. ա) տիպերի ընդհանրացումը կատարվում է ուսումնասիրվող օբյեկտների յուրահատկության բացահայտման համար (ընդ որում, գտնված յուրահատկությունը կարող է բնորոշել ինչպես ամբողջ սիստեմը, այնպես էլ նրա առանձին տարրերը), բ) տիպերի կառուցումով օբյեկտներն այնպես պետք է ընդհանրացվեն, որ հնարավոր լինի նրանց առավելագույն համեմատությունը։

Համեմատական մեթոդն իր բուն իմաստով կիրառելի է ոչ միայն արդեն կառուցված տիպերի նկատմամբ, այլև հետազոտության նախնական շրջանում։ Ավելին, օբյեկտների ընդհանրացումը և կարգավորումը տեղի է ունենում այդ իսկ մեթոդի կիրառման շնորհիվ։ Հենց համեմատական ուսումնասիրությունն է, որ հնարավորություն է տալիս բացահայտել պատմական երևույթների ներքին, կառուցվածքային միասնականությունը և ստեղծել որոշակի, համապատասխան տիպ՝ ընդունակ ուսումնասիրվող օբյեկտները արտահայտելու իրենց ամբողջության մեջ։ Համեմատական մեթոդի կիրառման հաջորդ շրջանը կապված է արդեն կառուցված տիպերի համեմատական հետազոտության հետ։ Այսպիսով, տիպայնացումը և նրանց համեմատական հետազոտությունը երկու փոխպայմանավորված, փոխներթափանցող գործո-

---

5 К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 39. стр. 356.

6 Կ. Մարքս, Ֆ. Էնգելս, Նամակներ «Կապիտալի» մասին, Երևան, 1954, էջ 82—83։

գություններ են, որոնք և թույլ են տալիս նման մոտեցումը առանձնացնել իրրև համեմատական-տիպաբանական մեթոդ։

Ինչպես ասվեց, համեմատվող օբյեկտների տիպաբանման անհրաժեշտ նախադրյալը դրանք որպես համակարգեր դիտելն է՝ պայմանավորված նրանց տարրերի որոշակի կապերով ու հարաբերություններով։ Այս իմաստով ուսումնասիրվող երևույթների դիֆուզային կամ ծագումնաբանական նմանությունը կամ տարբերությունը չի կարելի հակադրել նրանց տիպաբանական նմանությանը կամ տարբերությանը, որոնք դրանց գոյության և զարգացման ներհատուկ օրենքների արդյունքն են։ Պատմամշակութային համակարգերի տիպաբանական հետազոտությունը վերանում է ուսումնասիրվող օբյեկտների նմանության կամ տարբերության պատճառներից, որը, սակայն, պատմական համակարգերի համեմատական-ծագումնաբանական կամ համեմատական-կոնտակտային (շփումնային) ուսումնասիրությանը բոլորովին չի խանգարում։

Անդրադառնալով պատմամշակութային օբյեկտների տիպաբանական ընդհանրացման պրոբլեմին, նշենք, որ մտցնելով հասարակական-տնտեսական ֆորմացիա հասկացությունը, պատմական մատերիալիզմը առաջինը տվեց այն գիտական չափանիշները, որոնցով կատարվում է պատմամշակութային համակարգերի տիպայնացումը։ Ինչպես նշել է Վ. Ի. Լենինը. «...հասարակական նյութական հարաբերությունների վերլուծությունը միանգամից հնարավորություն տվեց նշմարելու կրկնելիությունն ու կանոնավորությունը և ընդհանրացնելու տարբեր երկրների կարդերը հասարակական ֆորմացիա մի հիմնական հասկացության մեջ»[7]։

Մասնագիտական գրականության մեջ գոյություն ունեցող կարծիքների համաձայն, պատմահամեմատական մեթոդը մինչև վերջին ժամանակներս հիմնականում ծառայում էր համաշխարհային պատմությունը որպես օրինաչափ և բնապատմական պրոցես դիտելու մատերիալիստական դրույթի հիմնավորմանը, որը թույլ է տալիս համաշխարհային պատմությունը դիտել իբրև զարգացման հաջորդական ծավալում։ Թեև այս մոտեցումը միանգամայն արդարացի է և արգասաբեր, բայց պատմական համակարգերի տիպաբանական ուսումնասիրությունը պետք է կարողանա բացահայտել ոչ միայն նրանց համընդհանուր կողմերը, այլև նրանց անհատականությունն ու անկրկնելիությունը։ Այս կապակցությամբ միանգամայն իրավացի է Բ. Պուտիլովը, երբ գրում է, թե՝ «տեսությունը, որը չի լուսաբանում բանահյուսության բոլոր փաստերը, չի կարողանում բացատրել եզակին և անհատականը, բանահյուսությանը հարկավոր չէ։ Պատմատիպաբանական վերլուծությունը, և հենց դրանում է նրա յուրահատկությունը և դժվարությունները, միաժամանակ պետք է ուղղված լինի տիպաբանական օրինաչափությունների (փուլայնության) բացահայտման և կոնկրետ պատմության պարզաբանմանը»[8]։

Տիպաբանական ուսումնասիրությունների ճանաչողական նշանակության այսպիսի ըմբռնումը չափազանց արժեքավոր է։ Ավելին, պատմամշակութային դիտելիքի էությունը հենց իր օբյեկտների անհատական յուրահատկության և պատմական յուրօրինակության բացահայտումն է։ Հատկանշական է, որ խոսելով ազգագրության առարկայի մասին, ակադեմիկոս Յու. Բրոմլեյը

---

[7] Վ. Ի. Լենին, Երկերի լիակատար ժողովածու, հ. 1, Երևան, 1974, էջ 159։

[8] Б. Н. Путилов, նշվ. աշխ., էջ 25։

գրում է. «ազգագրության առարկայական բնագավառը առանձնացնելու հիմնական չափանիշը էթնոսի գործոնների դիտարկումն է նրանց կատարած էթնիկական դերի և, ամենից առաջ, էթնիկական յուրօրինակության տեսակետից»[9]։

Քանի որ տիպաբանությունը կարող է հաշվի առնել օբյեկտների ինչպես ընդհանրությունը, այնպես էլ յուրօրինակությունը, ապա հնարավոր է դառնում պատմական տիպաբանությունը բաժանել՝ 1) ընդհանուր պատմական տիպաբանություն և 2) լոկալ պատմական տիպաբանություն։

Ինչպես ասվեց, օբյեկտների ընդհանուր տիպաբանության հիմքը հասարակական-մշակութային համակարգերի գոյության և զարգացման ընդհանուր պատմական օրինաչափություններն են։ Որպես օրինակ կարելի է բերել հասարակական-տնտեսական ֆորմացիա հասկացությունը։ Դրա հետ մեկտեղ նշենք, որ հասարակական-մշակութային համակարգերի միասնական շարքի կառուցումը, անկախ նրանց գոյության և զարգացման տեղից ու ժամանակից, կարող է իրականացվել նաև այլ կարգի, օրինակ՝ էկոլոգիական օրինաչափությունների հիման վրա։ Այսպիսի ընդհանրացման արդյունք է ազգագրության ամենահիմնական հասկացություններից մեկը՝ տնտեսական-մշակութային տիպ (SMS) հասկացությունը։

Թե՛ հասարակական-տնտեսական ֆորմացիան, և թե՛ SMS-ն պատկանում են ընդհանուր տիպաբանությանը։ Դրանց երկուսի հիմքում էլ ընկած են մարդկային հասարակությանը հատուկ տնտեսական գործունեությունը և արտադրության ձևերը։ Չնայած դրան, նրանց արտահայտած երևույթները տարբեր են իրենց բնույթով և տիպայնացման մակարդակով։ Մեթոդաբանական տեսակետից շատ կարևոր է այդ երկու հասկացությունների փոխպայմանավորվածությունը ընդհանրապես և դրա դրսևորումը կոնկրետ պատմական պայմաններում։

Հասարակական-տնտեսական ֆորմացիա հասկացության միջոցով ընդհանրացվում է մարդկության պատմությունը և այն տիպայնացվում պատմականորեն ձևավորված արտադրության ձևերի հիմքի վրա։ Ճիշտ է, արտադրության ձևերը հասարակության և բնության փոխհարաբերության արտահայտությունն են, սակայն տիպաբանական այս. կարևոր կատեգորիայի ֆունկցիաներից մեկն էլ հասարակության և անհատի, կոնկրետ հասարակության շրջանակներում անհատների միջև ձևավորված հարաբերությունների բացահայտումն է։ Անշուշտ, դրա հիմքը արտադրության կոնկրետ ձևն է։

Ինչ վերաբերվում է SMS հասկացությանը, ապա վերջինս արտահայտում է հասարակության և բնական միջավայրի փոխհարաբերությունը և այդ փոխհարաբերության պատմական ձևերը, որոնց շնորհիվ բացահայտվում են հասարակության տնտեսական և մշակութային յուրահատկությունները՝ կախված էկոլոգիական այն միջավայրից, որում այն գոյություն ունի։

Ասվածից բոլորովին չի հետևում, թե արտադրության ձևերն ուսումնասիրելիս հասարակության և բնական միջավայրի փոխհարաբերությունը հաշվի չի առնվում։ Ընդհակառակը, արտադրության ձևերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վերջիններս բնական միջավայրին հարմարվելու-հարմա-

[9] Ю. В. Бромлей, Этнос и этнография, М., 1973, стр. 207.

բացնելու կարևորագույն միջոցներ են[10], և մարդկային առաջընթացը հենց նրանց հաջորդափոխությունն է։ Այս առումով արտադրության տարբեր եղանակների վրա հիմնված հասարակական-տնտեսական ֆորմացիաները բնական միջավայրին հարմարվելու և այն վերափոխելու ամենալավագույն միջոցներ են։ Հասարակական-տնտեսական ֆորմացիայի հիմնական ճանաչողական նշանակությունը, այնուամենայնիվ, մարդկության պատմության ընդհանրացումն ու դասակարգումն է ըստ հասարակության կառուցվածքի վրա արտադրության ձևի աղդման։ «Աշխատանքի բաժանման զարգացման տարբեր աստիճանները միևնույն ժամանակ սեփականության տարբեր ձևեր են, այսինքն աշխատանքի բաժանման ամեն մի աստիճան որոշում է նաև առանձին անհատների հարաբերությունը համաձայն աշխատանքի նյութի, գործիքների և աշխատանքի արդյունքների նկատմամբ նրանց ունեցած վերաբերմունքի»[11]։

ՏՄՏ հասկացությունը, արտահայտելով բնական միջավայրով պայմանավորված տնտեսական մասնագիտացումը և մշակութային յուրօրինակությունը, հնարավորություն է տալիս պատմական երևույթները տիպայնացնել որակապես այլ մակարդակով։ ՏՄՏ հասկացության օգտագործմամբ հնարավոր է լինում բացատրել «ինչպես տարբեր լեզվով շատ ժողովուրդների մշակույթների նմանությունների մեծամասնությունը, այնպես էլ ազգակից լեզուներով խոսող ժողովուրդների մշակութային բազմազանությունը»[12]։ Հասկանալի է, որ մշակութային նմանությունները և տարբերությունները միայն սոցիալ-տնտեսական զարգացմամբ բացատրել հնարավոր չէ։ Պատմամշակութային երևույթների բացատրման մեջ պատմաաշխարհագրական գործոնը մտցնելը թույլ է տալիս այդ պրոբլեմը լուծել հետևյալ կերպ. էկոլոգիական նման պայմանների առկայությունը աջակցում է տարբեր ժողովուրդների մշակույթի և տնտեսական մասնագիտացման որոշակի ընդհանուր գծերի դուգամետ ձևավորմանը այն դեպքում, երբ այդ հասարակությունները միմյանցից ժամանակով և տարածությամբ բաժանված են։

Հասարակության և շրջապատող բնական միջավայրի փոխհարաբերության լույսի տակ ՏՄՏ-երը հանդես են գալիս իբրև հատկապես մարդկային, մշակութային մեխանիզմներ, որոնք կոչված են հասարակության և բնական միջավայրի փոխհարաբերության մեջ կատարել հարմարեցվող-հարմարեցնող մեխանիզմների դեր։ Ընդ որում, այդ փոխհարաբերությունը պատմական բնույթ ունի և պայմանավորված է արտադրության կոնկրետ պատմական ձևերով։ Մյուս կողմից, էկոլոգիական պայմանների բազմազանությունը, այլ գործոնների հետ ունեցող ամբողջության մեջ, նպաստում է համընդհանուր պատմական օրինաչափությունների դրսևորման տարբեր ձևերի, այդ թվում

---

10 Մարդկային գործունեության հարմարեցնող-հարմարեցվող բնույթի մասին տե՛ս Э. С. Маркарян, О генезисе человеческой деятельности и культуры, Ереван, 1973, стр. 76—85.

11 К. Маркс и Ф. Энгельс, Фенербах. Противоположность материалистического и идеалистического воззрений, М., 1966, стр. 24—25.

12 Н. Н. Чебоксаров и И. А. Чебоксарова, Народы, расы, культуры, М., 1973, стр. 169.

նաև տարբեր պատմաազգագրական շրջանների ձևավորմանը։ Պատմական տվյալ ընդհանրության նյութական և հոգևոր մշակույթների կախվածությունը բնական միջավայրից, որն արտահայտվում է SMS-ում, առկա է թեև մեծ, բայց պատմական որոշակի ժամանակաշրջանում՝ միջկապիտալիստական ֆորմացիաներում։

Արտադրության կապիտալիստական եղանակի առաջացմամբ բնություն-հասարակություն փոխհարաբերությունը որակապես այլ է դառնում։ Կարելի է ասել, որ բնության և մարդու միջև առաջին անգամ «խցկվում է» մեքենան, տեղի է ունենում բնությունից մարդու աստիճանական օտարացում, մի խոսքով՝ նրանց փոխհարաբերությունը դառնում է միջնորդավորված։ Կ. Մարքսը նշել է, որ «Հասարակության բոլոր այն ձևերում, ուր գերիշխում է հողային սեփականությունը, դեռևս գերակշռում են բնությամբ որոշված հարաբերությունները։ Իսկ այն ձևերում, ուր գերիշխում է կապիտալը, գերակշռում է հասարակությամբ, պատմությամբ ստեղծված տարրը»[13]։

Ազատվելով իր էթնո-մշակութային յուրահատկություններից, ամեն մի կոնկրետ հասարակության նյութական տեխնոլոգիան ձեռք է բերում առավել հա՛մապարփակ բնույթ։ Հենց այդ պատճառով էլ էթնիկական մշակույթի առանձնահատկությունները սկսվում են արտահայտվել ավանդական-կենցաղային մշակույթում։ Պատահական չէ, որ ազգագրական ուսումնասիրությունների օբյեկտը դառնում է հենց այդ բնագավառը։

Այսպիսով, SMS հասկացությունը արտահայտում է կապիտալիստական արտադրաեղանակին նախորդող ժամանակաշրջանի տարբեր էթնիկական մշակույթների որոշակի ընդհանուր կողմերը, որոնք իրենց հերթին պայմանավորված են այն բնական միջավայրերի նմանությամբ, որոնցում այդ մշակույթները գոյություն ունեն։ Պատմամշակութային գիտելիքի մեթոդաբանական հիմքերի որոշման համար տիպաբանական այս երկու հասկացությունների փոխհարաբերության պարզաբանումը կենսական նշանակություն ունի։ Քանի որ այդ հասկացությունները նկարագրում են տարբեր մակարդակի երևույթներ (անհատ-հասարակություն և հասարակություն-բնություն), ապա նրանց օգտագործման բնագավառները տարբեր են։ Որոշ տնտեսական մշակութային տիպեր բնորոշ են և՛ ստրկատիրական, և՛ ֆեոդալական արտադրության եղանակներին։ Այսպես, եթե որսորդների, հավաքիչների և ձկնորսների տնտեսական մշակութային տիպը խիստ բնորոշ է նախնադարյան արտադրաեղանակին, ապա հողագործների և անասնապահների տնտեսական մշակութային տիպերը կարող են հավասարապես գոյություն ունենալ ինչպես ստրկատիրական, այնպես էլ ֆեոդալական արտադրաեղանակում։ Այսպիսով, հասարակական-տնտեսական ֆորմացիաների և տնտեսական մշակութային տիպերի փոխհարաբերության պրոբլեմի լուծումը պետք է անպայման հաշվի առնի դրանց ինքնուրույն կամ, այսպես կոչված, «միջ-ֆորմացիոն» բնույթը։

---

[13] К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 46, ч. 1, стр. 44.

СРАВНИТЕЛЬНО-ТИПОЛОГИЧЕСКОЕ ИЗУЧЕНИЕ ИСТОРИЧЕСКИХ СИСТЕМ

ЭДУАРД МЕЛКОНЯН

Резюме

При решении многих методологических и теоретических проблем исторического знания в целом большое значение имеет систематическое применение сравнительно-типологического метода. Особенность данного подхода заключается в необходимости предварительного типологического обобщения изучаемых исторических систем и построения соответствующих культурно-исторических типов самых различных уровней. Исходя из основных познавательных задач исторического значения, представляется возможным построение двух видов типологии: общая историческая типология и локальная историческая типология. В основу построения понятий на уровне общей типологии могут быть положены как наиболее общие законы функционирования и развития социально-исторических систем («общественно-экономическая формация»), так и закономерности иного, экологического порядка («хозяйственно-культурный тип» в этнографии).